

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ՍՐՏԱՍՏԱՄԱՆ

Երկու քիչ մեկ ծրարով

Տարեկան 14 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.

ՍՄԵՐԻՍ

Տարեկան 2.60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԽԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.

Հ Ա Ս Ց Լ

Redaction du Journal

«Iraounk»

(Bulgarie) VARNA


Редакция

на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Իրոշքիւնք ետ չեն տրոշիր.



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏՏՈՐԱԿՈՒԹԻ ՍՄԵՆ ՉՈՐԵՐՇՈՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՊՍՈՒՍԿՏՄԱՆ ԳՈՐԾԸ

Ասկէ ոչ աւելի քան քսան-երեսուն տարի առաջ, կրօնական-գաւառաբանական խնդիրները օրուայ խնդիրներն էին, որոնցմով կը զբաղէր հայկական միտքը իւր ազգային-հասարակական խաղաղ մշակութեան շրջանի մէջ։ Ասկէ քան կաթողիկոսական դաւանութիւնը, բողոքականութիւնն էր որ, կարծես, գրաւած էր բերքի վերայ առաջին դիրքը։ Ոգտուելով այն հանգամանքէն որ ազգը կը գտնուէր անտէր, անիշխան վիճակի մէջ, օգտուելով ներմանապէս այն վերահաս ազատամարտական տեսութենէն, որի համեմատ ազգային սեփական եկեղեցիէն բաժնուիլը ամենեւին կարող էր չխանգարել ազգութեան կամ ազգայնութեան սկզբունքը, պատուելիներ միասնաբար, ամեն ազգէ, մինչեւ սեփական ազգային շարքերէն, ընկել էին ամենամեծ ուժով, ամենամեծ եռանդով այն անպաշտպան, այն անզօր հօտին վերայ, որ հայ ժողովուրդն էր, և կը պառակտէին զայն անխնայ անողորմ, անխիղճ, հօտը ինքն ալ պէտք է խոտովանիլ տրամադիր էր եւթութարկուելու այդ պառակտման վնասակար և զլուելի դործին։

Սակայն, ժամանակները չմնացին այդպէս նախ փոխուեցան, Հայութիւնը քնած էր Բնած էին և ազգային զգացումները՝ Բայց ահա արթնացաւ նա և նորահետ, արթնացան ազգայնական զգացումները, որոնք գնալով աւելի ու աւելի շրջառեցան, սաստկացան և խոտացան։ Դաւաքական ընդհանուր հանգամանքներու փոփոխութեամբ ու նոր դասաւորութեամբ, ազգայնական զգացումներու բարձրացող հոսանքը վերջապէս յանգեցաւ այն շարժման, որ յայտնի է յեղափոխական շրջան անուամբ մեր ժամանակակից պատմութեան մէջ։

Այդ շարժումը-ազգային ազատագրական շարժումն էր օտարի լուծէն, պայմանաւորուած ազգա-

յին սեփական քաղաքական իշխանութեան նուաճմամբ։

Ինչ եղաւ այդ շարժման ազդեցութիւնը վերաբերմամբ կրօնական դաւանափոխական հոսանքին, որ հէնց քիչ առաջ իր թափի, իւր սատկութեան մէջն էր։ Նա զայն կտրեց միանգամայն, նա զայն չլատեց, կեցուց, դադարեցուց, անդամալուծեց։ Ազգայնական հոսանքը սպանեց գաւառափոխական խնդիրը։

Այդ տեսակէտով նա եղաւ միանգամայն բարեբար, դրական և առողջ։

Հարկաւոր էր որ նա այդ հոսանքը, վերայ հասնէր և չթողնէր որ կրօնային անվերջ, անյատակ խնդիրները յոգնեցնէին ազգային գիտակցութիւնը և բաժան բաժան անէին ազգային մարմինը։ Բաւական էր արդէն և բաւական էր ալ աւելի, որքան բաժանուած էր այն։ Ասկէն կը լինէր միանգամայն կործանիչ և, ապագայ ազգային քաղաքական շէնքի կառուցման տեսակէտով ամեն յոյսի իսպառ ոչնչացում։

Ազգային զգացումներու արթնութեան և նոցա հետզհետէ աւելի ու աւելի զարգացման, բացուելուն հետեւանքով ձեռք բերուած այս գեղեցիկ արդիւնքը, կը թուի, ազգութիւնը և նորա բաղդին վերահսկիչ կարգուած ազգային իշխանութիւնները աղատած պէտք է լինէր այլեւս այն մտահոգութենէն, որուն ենթակայ էին նոքա, այդ դաւանափոխական կրօնական պրօպագանդայէն գալիք չարիքներու վերաբերմամբ։ Հայկական Ամբողջութեան համար։

Եւ սակայն նորանոր փաստեր կուգան մեզ յայտնել թէ այդ զլուելի և բացասական շարժումը բոլորովին ալ չէ դադարած, չէ մեռած, չէ ոչնչացած։ Նա տակաւին կապրի։ Նա դեռ չունի ունի և կը զործէ։ Այսպէս, օրինակ, վառնայի մէջ, մենք տխուր բաղդը ունեցանք ալ ձանադրելու հայ Լուսաւորչական եկեղեցիին պատկանող երկու անդամների, մէկը՝ երիտասարդ տղայ, միւսը՝ մանկամարդ օրիորդ, հե-

ռանալովը ազգային եկեղեցիէն և մտնելը բողոքական եկեղեցւոյն մէջ, առաջնորդութեամբ յայտնի բողոքական Ամբողջութեանցի։

Լուսաւորչական եկեղեցիին պատկանող այդ զոյգը հարկաւոր համարեց իւր երջանիկ րոպէն օրհնել տալ ոչ հայ քահանային (Ֆիլոսոֆ), այլ բողոքական պատուելիին, Չիտենք ինչո՞ւ։ Կարծե՞ց արդեօք այդ զոյգը որ հայ Լուսաւորչական քահանային օրհնութեան տակ կատարուած ամուսնութիւնը չպիտի բերէր իրենց բաղդ, երջանկութիւն, որ նա պիտի դատապարտէր զինքը ամբողջութեան, անբերրիութեան, իսկ, ընդհակառակը, բողոքական պատուելիին օրհնութեան տակ նա, այդ ամուսնութիւնը, պիտի լինէր բաղդաւոր, երջանիկ, որ նոցա սերունդը պիտի բաղմանար ծովու աւազներու և երկնքի աստղերու շափ, ինչպէս երբեմն Աբրահամի սերունդը։

Ինչո՞ւ վաղատորիւ այդ տխուր երեւոյթը, Բացատրե՞լ զայն ազգայնութեամբ, չբացատրեմք, ինչպէս կը բացատրուին շատ ուրիշներ։—Ոչ ամենեւին։

Բացատրե՞լ զայն տեսնական, քաղաքական, հարկային ճնշումներով, հարստահարութիւններով, ինչպէս կը պատահի հայկական անտէր գաւառներու մէջ—ո՛չ եւս։

Կը կարծենք թէ ուրիշ բանի մը մէջ չէ կարող նա գտնել բացատրութիւն, բայց եթէ իմացականութեան տկարութեան եւ ընտանեկան բացակայութեան մէջ, որով կը յայտնուի այժմ մեր երիտասարդ սերունդի մի մասը։

Որովհետեւ մենք չգիտենք դատել առողջ, որովհետեւ մենք չունինք կամք, այդ պատճառով ալ մենք տեղի կուտանք այդպիսի տխուր երեւոյթներու, որպիսին է դաւանափոխութիւնը հայութեան մէջ։

Ասկէ է որ կրօնական անմիտ պրօպագանդան տակաւին չէ աւարտած իւր աւերիչ գործը։ Ասկէ է որ նա միշտ գեռ պատ-

րատ է ցտելու, քայքայելու։ Հայկական Ամբողջութիւնը, եւ որովհետեւ այդպէս է, հարկաւոր է որ եւ այդ կողմանէ ազգը, ազգային իշխանութիւնները չըքնանան։ Պէտք է հսկել արթուն։ Պէտք է չախլախել ամեն այդպիսի փոխ։ Չպէտք է թող տալ որ, ծածկուելով անմիտ գաղափարներու տակ, առաջնորդուելով տհաս, խակ սկզբունքներով, պառակտուի եկեղեցին, այն եկեղեցին, որ իր կազմութեան ու կազմակերպութեան համար հաշիւ ու համար չունեցող զոհեր տարած է հայութենէն, այն եկեղեցին, որ ի բացակայութեան ազգային քաղաքական իշխանութեան, ամուր պարիսպ եղած է Հայկական Ամբողջութեան պահպանման դարերու դժուարութեանց մէջէն անցնելով։ Այդ եկեղեցին, ազգութեան կմախքն է, որի շուրջը հաւաքուած են ազգային, այլ հաստատութիւններ։ Այդ կմախքը չպէտք է որ ձուի, շեղուի կամ կոտորուի։ Նա պէտք է մնայ կանգուն, ամուր, մանաւանդ քանի ազգը զուրկ է իր սեփական իշխանութենէն։

Անշուշտ, կառարկեն մեզ, ազգային եկեղեցիէն Բաժնուիլը դեռ չի նշանակել ազգութենէն հեռանալ։ Այո, այդ կարող է այդպէս լինել, այդ կարող է տեսականապէս հասկացուիլ։—Բայց, բայց... բայց մենք կը կարծենք որ ազգութիւնը աւելի լաւ կը պահուի նոյն իրա, ազգային եկեղեցւոյն մէջ, անկէ դուրս—վտանգն է, պատահականութիւնն է, արկածն է և ամեն ինչ որ անյայտութիւն է։

Այդ ճամբան լաւ է փակել, բոլորովին փակել։

Հ Խոշարպուրեան



ՊՈՒԼԿԱՐԱՅԱՅ ՀԱՍՏԱՌՈՂՈՎ Ի ՍՕՖԻՍ



Յիւլիպէի Թաղ. Խորհուրդը հը-
րաւարակելու խնդրանք մեզ
զրկած է իր հետեւեալ որոշումը,
որուն կարեւորութիւնը բազմիցս
չեղանակած է մեր կողմէ ալ հե-
տեւաբար մենք ըստ ամենայնի
համակիր ենք անոր:

Փ. Պոլիս, 24 մայիս

Թաղի. Խորհ. Հայոց
Փ. ՊՈԼԻՍ

Որոշուող ներկայ ամսոյն 22ին
իր 27րդ նիստի մէջ նկատելով որ Ս.
Պատրիարք հօր ուղղած իր կրկնակի
խնդրանքներուն հակառակ կարելի
չեղաւ մինչեւ այսօր Այցելու Հովնաթի
մը առաքումը, նկատելով որ ճշտ
այս պատճառաւ Որոշողոյս նախաձեռ-
նութեամբ ծրագրուած համաժողովին
դուժարութիւնը Զատիկէն վերջ յետաճը-
ռած էր մինչեւ այս վերջինին դարձ,
նկատելով որ պուլկարահայ ներկայ
հեղեղեցական եւ կրթական անկազմա-
կերպ վիճակը սակայն կերպով արդէն
կը վտանգէ պուլկարահայ համայնքին
ինքնուրոյնութիւնը, որ ի մասնաւորի
կը զգացուի կրթական գործին յարա-
ճուած քայքայումին մէջ եւ վերջապէս
նկատելով որ համաժողովի գումար
ման պատասխանատուութիւնը Որո-
շողոյս վրայ կը ծանրանայ, իբր նա
խաձեռնարկող մարմին, որոշեց հա-
մաժողովար հրաւիրել յառաջիկայ ամ-
սոյն 31ին իր ամենայնարժար թուա-
կան, յորում կսկսին յառաջիկայ զըպ
րոցական շրջանի նախապատրաստու-
թիւնները:

Թէեւ Ս. Պատրիարք հայրը յաջո-
ղած է իր վերջին շրջաբերականին հա-
մաձայն, արտօնութիւն ստանալ օտա-
րանգ ստակ եւ Ուսումն. Որոշուողը
վկայեալ ուսուցիչներու պաշտօնավա-
րութեան համար եւ սակայն նկատե-
լով որ պուլկարահայութիւնը օգտը
ուելով այս ժամանակաւ որ արտօնու-
թեան պէտք է պատրաստուի թէ երկ-
րին օրէնքը եւ թէ մեր կրթական գոր-
ծին պէտքերը գոհացնող ուսուցիչներ
ունենալու յառաջիկային մէջ, Որո-
շուողը քը կրնար աւելի յետաճել
համաժողովի դուժարութիւն, եւ միւս
կողմէն իր յկատի ունենալով նաեւ
յառաջիկայ նոյեմբեր 13ին կատար-
ուելիք կառուցկիական ընտրութիւ-
նը, որ պուլկարահայութիւնը ունե-
նայ իր աւժանաւոր մասնակցութիւնը
ինչ հուրդս որոշեց զիմի պուլկարա-
հայ Ազգ. պաշտօնական մարմիններու,
որպէս զի փութան իրենց պատգամա-
ւորները զրկել մինչեւ Յունիս 30, որ
օր պիտի բացուի եւ համաժողովը ի
Սօփիա հետեւեալ օրակարգով:

1. — Կաթողիկոսական ընտրութեան
առթիւ պատգամաւորի մը ընտրուե-
թիւնը:
2. — Պուլկարահայ Առաջնորդական
խնդիրը:
3. — Պուլկարահայ կրթ. գործին
կազմակերպութիւնը:

Սո այս որոշուեցաւ գրել վստահ,
Թ. սեւեզ ու Սօփիա եւ խնդրել երկ-
երուս պատգ. մաւոր, որոնք սակայն
պէտք է ներկայանան իրենց պատկա-
նած մարմինն որոշ հայեացքներով օ-
րակարգի վրայ զրուած հարցերուն:

Նկատմամբ, եւ ըստ կարելւոյն ներ-
կայանալիք պատգամաւորները պէտք
է նաեւ իրենց տեղւոյն հասարակու-
թեան քննութեան ենթարկեն հար-
ցերը ընդհ. ժողովներու միջոցաւ, ոյ-
պէս զի ազգային պատգամաւորի մը
բոլոր իրազօրութեամբ մասնակցին ժո-
ղովին: Որոշուեցաւ գրել նաեւ նոյնը
միւս քաղաքներու համար, որոնցմէ
պիտի խնդրուի մէյ-մէկ պատգամաւոր
միեւնոյն կէտքով, իսկ այն քաղաք-
ներ որոնք հազորդած են մեզ թէ չեն
կրնար զրկել պատգամաւոր, կրնան
իրենց ձայնը տալ Սօփիաքանակ հայու-
մը, բաւական է որ այս անհատը ու-
րիշ քաղաքէ մը արդէն նշանակուած
չըլլայ իբր պատգամաւոր, վասն զի
իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայ-
նէ աւելի պէտք է ունենայ:

Նոյնպէս որոշուեցաւ գրել Պ. Հ.
Ո. Միութեան եւ խնդրել երկուս ներ-
կայացողից համաժողովարի համար,
զիմի նաեւ Ռազմի. ի եւ Խաւառնի
խմբադրութեանց, մէյ-մէկ ձայնով
մասնակցելու համաժողովին իբրեւ
մամուլ ներկայացողիցներ:

Որոշուողը պաշտօն տուաւ իր գի-
ւանին հրատարակելու այս որոշումը
Ռազմի. ի, Խաւառնի եւ Ռազմի. ի խմբ-
ներու միջոցաւ:

Թուղի. ԽՈՐՀՈՒՐԴ
(Կնիք)

ԲԱՆԱԿԱՆ

Մակեդոնիան եւ պ'ստիւնները



Կէս պաշտօնական ծանուցագիր մը
հաղորդուած է անգլիական թերթե-
րուն այսպէս:

Մակեդոնիայ բարենորոգմանց հա-
մար Անգլիոյ առաջարկած ծրագրին
դէմ Ռուսիան ալ ծրագրի մը առա-
ջարկած էր: Եւ միւս Անգլիան ալ նոր
առաջարկութիւններու ծրագրի մը ներ-
կայացուցած է Ռուսիայ ի պատաս-
խան անոր ծրագրին:

Անգլիոյ վերջին առաջարկութիւն-
ները ոչ մէկ փոփոխութիւն չեն բերել
իր ծանօթ քաղաքականութեան վրայ:
Սրբ. էա. Կրէյ կը բաւականանայ թէ
լսող ելով ինչ ինչ ամբողջներ Ռու-
սիոյ առաջարկութիւններու մասին,
որոնց նկատմամբ երկու կողմաւորու-
թիւնները առաջին համաձայնած էին
ըստ բաւականին:

Այժմ կը թելադրէ անեւ մի քանի
կէտքով մանրամասնութիւններ որոնց
սկզբամբ գաղափարաւոր են Լօնտօն
եւ Բեռլին:

Ընդհանուր կերպով կարելի է ըսել
թէ երկու կողմաւորութեանց միջեւ
փոխանակուած հաղորդագրութիւնները
սա քանի մը շարժումներ մէջ արդիւնք
ունեցան ընդլայնել քանի մը հիմնա-
կէտեր եւ զլուծի հանել ընդհանուր
յատկագրի մը որուն վրայ մօտաւորեալ
համաձայնութիւն մը շատ հաւանական
կը տեսնուի:

Ռուսիան անգլիական նոր ծանու-
ցագրին պիտի պատասխանէ: Այժմ ո.
րոշապէս չը գիտցուի թէ անկէ յետոյ
ինչ պիտի ըլլայ:

Սակեդոնիայ գործերու մասին խոր-
հրդակցելու համար միջազգային գօնե-
լիք մը կազմելու գաղափարը անհետե-
ւած մնաց: Այդ մտքին ծնունդ տը
որող այն քաղաքներէն իր թէ պ'տու-
թեանց ներկայացողիցներ Պոլիս հա-
ւաքուին իրենց մէջ բանակցելու: Բա-
րենորոգմանց այն բոլոր նոր յատա-

կազմներու մասին որոնք կրնան ա-
ռաջարկուիլ:
[Որոնց մէջ նաեւ հայկական նա-
հանգներու բարենորոգումը կենթադ-
րուի]:

Քիւրսկու առշաւանի Պարսկաստան

Թուրքիոյ քիւրսկու պարսկական
հողը մտած են Ուրմիոյ լիճին մօտերը:
Անոնք զիւր մը աւերեցին, բերդ մը
պաշարեցին եւ կարգ մը յափշտակու-
թիւններ ըրին:

Պարսկաստանի բողոքին վրայ, թիւրք
կողմաւորութիւնը հրամայեց զինուո-
րական իշխանութեան միջամտիլ:

Հեռագիր մը կրիւնցէ սահմանա-
զիւր թուրք հրամանատարին Ուրմիա
հասած ըլլալով:

Նօյնիս վերին կրիւնայ թէ թօյ
խապ գիւղէն յիսունի չափ կրնան
վախճալով որ Ուրմիա արշաւող Քիւր-
սկի զինքը բռնաբարին եւ շարձա-
րեն, անձնապահ եղած են իրենց եւ-
րախաներուն հետ ջուրը նետուելով:

Բեքրասպուրկ, 4 յունիս

Թէհրանէն Նօյնիս վերին հեռա-
գիր մը կըսէ թէ քաղաքիւ հրոսա-
կախութեան զ'նեալ' յանկարծ պաշա-
րեցին Ուրմիա քաղաքը, եւ բոլոր
շրջակայ գիւղերը: Անոնք կողբալու-
ցին եւ այրեցին թօյխապ գիւղը:

Թիւրքիա մը կրնան թուրքաւորել
վախճալով փախած են:

Եւ կաները գոց են, ժողովուրդը կը
փախչի:

Ծով երկու օրուան մէջ օդնութիւն
չի հասնի, սե՛ն փտանք կը սպառ այ
Ուրմիոյ:

Բեքրասպուրկ, 5 յունիս

Ստան Լեւոնի վրիւնայ թէ նոր
նախարարութիւնը տակաւին չէ կազ-
մուած: Կառութիւնը չփոխ է. չու-
կաները գոց են:

Եւ ինչ որ հետեւանք ունեցաւ որ
Եւրո իր հետեւորդներուն հետ քա-
ղաքէն դուրս գտնուող Պազէշահ պա-
լատը քաշուի:

Լօնտ. 5 Յունիս

Լօնտայի պարսիկ շրջանակները բո-
լորովին անհիմն կը յայտարարեն այն
տարածաշրջանները թէ Եւրո իր երկ-
րէն փախչիլ ծրագրէ:

Սաւոն կղզւոյն դեպքերը

Ո. Հալիս կրիւնայ Աթէնքէ թէ
Սաւոն կղզւոյն դահլիճ անդամները
(նախարարներ) Սօփիոյս եւ Հաճի
Արաքիս Գաղիոյ, Անգլիոյ եւ Ռու-
սիոյ գեղարարներուն մատուցած են եր-
կար յատկապէս մը, յայտարարելով
իրենց օրինապահութիւնը հանդէպ
Սոփիան եւ մատնանելով Սաւոնի
իշխան Գորասիս վարմունքը, որով
նա ձգտած է եղծել կղզիին ինքնավա-
րութիւնը թուրք զիւրսերը բերել
տալով:

Յիւստակագիրը երկ-որով կը թուէ
թուրք զօրաց ծայրայեղութիւնները եւ
կը յայտարարէ թէ Սաւոններու
կողմէ քան ապստամբական քայլ չէ
առնուած, անոնք զէպի Սոփիան ի-
րենց հաւատարմութեան ապացոյցը
տուած են:

Սաւոնի իրենք ինքնաբերաբար
պաշտին պաշարով վերցուցած են,
համաձայն ըլլալով որ կը բաւէր ի-
րենց ճակատագիրը պաշտպան պետու-
թեանց ձեռքը յանձնել, որպէս զի ի-
րենց իրաւունքները եւ իրենց ազա-
տութիւնը յարգուին:

Սաւոնի ժողովուրդը կը պահանջէ
«Սթամբուլ-քոյն» վերահաստատումը,
Գորասիս եւ կաշիւ իւր սա պատճա-
ռը զիւր է այն հարկածին որմէ ա-

ռաջ եկան խռովութիւնները, եւ անոր
հետ համաձայնութեան գալ անկարելի
եղաւ:

Յիւստակագիրը կը պահանջէ նաեւ
թուրք զօրաց մեկնումը, որոնց ներ-
կայութիւնը շարունակական զրգումն
աղբիւր մըն է, եւ նոյն իսկ մեկ-
նումը փոքր պահակաւորին, որ միշտ
վառարան մը պիտի ըլլայ վտանգաւոր
բարդութիւններու:

Դահլիճը իրեն կը վերապահէ պաշտ-
պան պետութեանց ներկայացուել ան-
հրաժեշտ առաջարկութիւններ խուսա-
փելու համար բոլոր նոր վտանգներէ
եւ վերահաստատուել ինքնավարութիւնը
(օրինակ) զոր եւրոպայի բարեացա-
կամութիւնը տուած է Սաւոն կղզիին:

Մ Ա Ր Օ Ք

Մօլլա-Հաֆիտի պատուիրակներն
Ֆրանսական կառավարութեան ուղ-
ղուած յունիս 4 թուականի նամակ մը
կրիւնցէ թէ Հաֆիտ մօտ օրէն Թէս
պիտի մանէ յաղթականօրէն, նոյն իրա-
գործելով իր դահակաւորութիւնը բոլոր
Մարքի մէջ: Պատուիրակները կրկին
կը ներկայացնեն Հաֆիտի յանձնարա-
րութիւնը Ֆրանսական կառավարու-
թեան հետ բարեկամաբար բանակցե-
լու եւ անոր քաղաքները, գործադրելու
համար պետութեանց հետ կ'ընտեղ
բոլոր պայմանագրութիւնները:

ՍՈՒՏԱՆԻ ԲՐԻՍՏՈՒՆ

Ապտէլ Բատի իմամ վատ-Հապապ
մոծ հողատէր մըն է Բատին գաւա-
ռին մէջ: Երկար ժամանակէ ի վեր
կարգ մը անհամաձայնութիւններ եւ
սխալ հասկացողութիւններ ունէր կա-
ռավարութեան հետ, որ կը պահանջէր
անոր հողերուն սահմանները ճշգրիտ:

Ապտէլ Բատի կրօնամոլ եւ ազգե-
ցութեան տէր անձ մը ճանչցուած
ըլլալով սկսած էր իր շուրջը հաւա-
քել քաղաքի զիւրաքանչիւր եւ ա-
նոնց կրօնական դասեր տալ: Ինչ վերջ
ինքզինքը «Յիսուս Բրիստոս» հռչա-
կած էր եւ շրջակայքին մէջ մեծ պա-
տիւններու արմատացած:

Կառավարութեան հետ օւնեցած առ-
կախ խնդիրները վերջացնելու հա-
մար հրաւիր. ձ էր տեղւոյն Մամուրը,
Մօհալէտ էֆ. Եէրէֆ եւ Անգլիայի
քննիչը Մօտըր Սթրօման Բրիթիս որ-
պէս զի իր տունը գալով բանակցին եւ
եղբակցութեան մը քանան յանգիլ:
Ապրիլ 20ին երկուքը միասին Մեհ-
լաւիէն մեկնելով ուղտով գացին Ապ-
տէլ Բատէրի գտնուած գիւղը, ուր ի-
րենց ուղեւորները վար իջնելով հետի-
ոսն ուղեւորեցան մինչեւ իր բնակա-
րանը: Հօն Ապտէլ Բատէր զիրենք
պատուաւորեց թէյ հրամցնելով: Սրբ
երկու հիւրերը իրենց թէյը խմելով
զբաղած էին, յանկարծ տան տիրոջ
հետեւողներէն մէկը երկար նիզակով
մը Մամուրին մօտեցաւ եւ վայն ա-
նի կուրծքը մխեց: Մեհլա մարգարէ
ին բոլոր հետեւողները այս նշանին
վրայ սնեկէն ներս խուժելով անքա-
ցատեղի մոլեցնու թեւամբ իսկան եր-
կու անգէն հիւրերուն վրայ եւ իրենց
արեւնկալ մոլուցքին առարկայ ը-
րին զանոնք անձանաչի զիւրսերու
վերածելով:

Լուրը խորթում հասածին պէս, մեծ
թուով զօրք զրկուեցաւ, որ գնաց քս
նակիլ զէպիին պատուած վայրէն 20
մղոն հեռու ուր եկաւ: Նաեւ միասն
վատ-Միւսանի նահանգային Մուտի
Միրալայ Տիքսըն պէյ իր տրամադ-

բութեան տակ գտնուող զինուորներով: Մրազբուժած էր գեղին վրայ յարձա-
կումը ընել մայիս 9ին առաւօտուն
Ապտէլ Բատէր միջոցով մը տեղեկա-
ցած ըլլալով թէ կատաւարութիւնը
չատխիտ միջոցներ ձեռք առած է
զինք եւ իրենները բնաջինջ ընելու
համար, առանց ժամանակ կորսնցնե-
լու իր շուրջը հաւաքեց իրեն խոր
խնկարկու արբանեակները եւ առտը-
ւան ժամը շին կատաղօրէն յարձակե-
ցաւ բանակին վրայ, որ բնաւ չէր
սպասեր նմանօրինակ յառաջխաղացու-
թեան մը թշնամիին կողմէ, եւ բնա-
կանաբար հարկ եղած նախազգուշա-
կան միջոցները ձեռք չէր առած:

Կոտին մէջ սուտանական բանակը
անկաւ 8 սպանուած եւ 24 վիրա-
ւոր: Ապտէլու անհաւանութիւնը մէջ կան եր-
կու եղիպտոսցի սպայ, իսկ վիրաւոր-
ներուն կարգին է միւրալայ Տըքսըն պէյ
եւ պէնպաշի Լօկան, այս վերջինը չա-
բաթ մը վերջը ստացած վէրքերէն մե-
ռաւ: Սուտանցիները զաշտին վրայ
թողուցին 33 մետեալ եւ 80 վիրաւոր
ու ցրուեցան զանալան ուղղութիւն-
ներու մէջ:

Հետեւեալ առտու բանակը յառա-
ւացաւ դէպի Ապտէլ Բատէրի գիւղը,
զոր կրակի տուաւ, եւ յաջողեցաւ գտ-
նել Մամուրին եւ անգլիացի քննի-
չին անձանային զարձած դիակները:
Անմիջապէս չորս կողմը հետազոտե-
ցաւ թէ Ապտէլ Բատէրը յաջողած է
փախչիլ եւ թէ զինք ողջ կամ մեռ-
եալ բերդին 100 ոսկի կը խոստանայ
կառավարութիւնը:

Ապտէլ Բատէր որ յաջողած էր զի-
չերանց բաւական հեռանալ իր բնա-
կած գեղէն, յոգնու թինէն ընկճուած
ճամբուն եզերքը ինկած էր եւ կը
քնանար: Անցորդ սուտանցի մը զինքը
ճանչնալով, մօտեցաւ անոր, քովէն
կախուած սուրը զգուշութեամբ քա-
լեց առաւ ու զինքը արթնցնելով ա-
ռաջարկեց որ իրեն հետեւի: Ապտէլ
Բատէր համակերպեցաւ եւ սկսաւ իր
ընկերակիցին քովէ ի վեր քայլել դէպի
Քամիլին ձամբան, սակայն գրպանէն
փոքր զաշտին մը հանելով սպաննեց
զինքը գերի բռնողը եւ ինքզինքը այս
անգամ բոլորովին ազատ կայծերով
սկսաւ վազել բոլորովին տարբեր ուղ-
ղութեամբ: Բայց իր ուրախութիւնը
կարճատեւ պիտի ըլլար, որովհետեւ
ճամբան 6 հոգիի հանդիպեցաւ որոնք
զինքը բռնելով տեղական «Ասկարիպ»
կոչուող անկողինի մը վրայ կապելով
քաղաք առաջնորդեցին փառաւորապէս:

Սուտանի զատական վարչութեան
տնօրէն Սը. Պօհամ Բարթէր որ պաշ-
տօնով Քամիլին կը գտնուէր, ապստամ-
բութեան միջոցին բանակին մօտ ա-
պստանած ըլլալով, ձեռքէն թելեւ
մը վիրաւորուեցաւ, եւ մղելով նիզակ
մը որ իր կուրծքին ուղղուած էր:

Կառավարութիւնը 50 ոսկի խոս-
տացած է Ապտէլ Բատէրի իրաւան-
չիւր փախստական արբանեակը գտնու-
ղին կամ սպաննողին:

Կարիք կը յայտնուէր թէ կառա-
վարութիւնը մտադիր է սուտ մարգա-
րէն Օմտուրման բերել տալով կախա-
ղան բարձրացնել, սակայն Սերտարը
պահանջած է որ զատավարութիւնը
ըլլայ ուղիւղական զատարանի մը ա-
ռաջ եւ ոչ թէ զինուորական, որ բը-
նականաբար անոր կախութիւնը պիտի
վճարէ:

(Քաղ. «Լուսաբեր»-էն)

ՄԱՆԹԱՇԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Մշակի մէջ կը կարդանք:

Մեզ հազորդու՞մ են, որ Մանթաշ-
եանի առեւտրական դպրոցի տեսուչ է
նշանակվել պ. Վ. Բարսեղեան, ու-
սուցիչ թիֆլիսի առեւտրական ու-
սուցիչ Թիֆլիսի ինչպէս յայտնի է, այդ
դպրոցը հիմնուած է Թիֆլիսի վաճա-
ռականական ընկերութեան ձեռքով
յանուն պ. Ալ. Մանթաշեանի, որ այդ
դպրոցի օգտին խոշոր նուիրատուու-
թիւն է արել (50 հազար ռուբլի):
Այդ դպրոցի նպատակն է տալ սան-
րին ընդհանուր եւ մասնագիտական
կրթութիւն, անհրաժեշտ նրանց հա-
մար, որոնք ծառայում են առեւտրա-
արդիւնաբերական եւ հասարակական
հաստատութիւններին մէջ, ինչպէս եւ
պատրաստել նրանց ինքնու-
րոյն առեւտրական գործունէութեան
համար: Դպրոցը բաղկացած է 3 հս-
րակրթական եւ '3 մասնագիտական
դասարաններից եւ աւանդու՞մ է 1. —
Հանրակրթական առարկաներ — կրօ-
նադիմութիւն, ուսուց, պերմանական
ֆրանսիական եւ տեղական լեզուներ:
Թ. արտնութիւն, այգէբրա, զեմէտրիա
պատմութիւն, աշխարհագրութիւն,
բնագիտութիւն եւ վայելչագրութիւն:
2. — Առեւտրական առարկաներ — հաշ-
ուապահութիւն (ընդհանուր եւ մաս-
նագիտական, առեւտրական, բանկա-
յին, նաւթարդիւնաբերական, ֆապ-
րիկա-գործարանային), առեւտրական
թուղթագրութիւն, առեւտրական աշ-
խարհագրութիւն, առեւտրական թղ-
թագրութիւն եւ առեւտրագիտութիւն:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի հաստատ-
ման 76-դ. տարեգարձը հանդիսաւոր-
ապէս տօնուեցաւ հիւղեցական ջո-
ջերու եւ երկսեռ բազմութեան մը ներ-
կայութեան: Պատրիարքը պատարա-
գեց եւ քարոզին մէջ յիշեց Հիւան-
դանոցին նախկին ու ներկայ բարե-
րարներուն անունները, երջանկայի-
շատակ Յարութիւն միմեծ Պէգճեանէ
սկսեալ, Պալեսն, Տաեան, Կիւլ-
պէնկեան, Ունճեան եւ Յակոբեան
գերգաստանները, որոնք այդ ազգա-
յին Տան հաստատման շարունակման
եւ զարգացման պատճառները եւ սիւ-
ները եղած են:

Այդ հանդէսը՝ որ տասնեակ մը տա-
րիներ առաջ Ազգ. Սահմանադրութեան
Տարեգարձովն ալ աւելի չքեղ եւ ոգե-
ւորեալ կըլլար, այս անգամ Սահմա-
նադրութիւնը յիշեցնող ոչ մէկ բառ
արտասանելու առիթը չը կրցաւ տալ:
— Տէր Վահրամ արքեպիսկ. Ման-
կունի Երուսաղէմէն Պօլսոյ հաւած ըլ-
լալով, Կրօն. ժողովոյ վերջին նիս-
տին ներկայ գտնուեցաւ իւր անգամ եւ
նախկին ատենակցի:

Կրօն. ժողովը Հայ Եկեղեցիին մէջ
բազմաձայն (եռաձայն, քառաձայն) եր-
դեցողութիւնը ընդունեց, պայմանաւ
որ Եկեղեցիին եւ Թաշճեանի յօրի-
նած եղանակներուն վրայ հիմնուած
ըլլան:

Եկեղեցւոյ մէջ Օռլի գործածութիւ-
նը խորհրդակցութեան նիւթ եղաւ ժո-
ղովին մէջ: Թէեւ ժողովականներու
մեծամասնութիւնը Օռլի գործածու-
թեան հոկաւակ կերեւար, սակայն ա-
տով հանդերձ որոշուեցաւ դպրագետ-
ներու հետ խորհրդակցել յետոյ անոր
գործածութիւնը չափաւորել:

Ինչպէս ի հնումն մեր եկեղեցական
հայրերը ընդունած են քնոցը եւ ծընծ-
ղան, մենք բոլորովին նորոյ՞մ մը մըտ-
ցուցած չենք ըլլար երգիծներ (Օռլը) ըն-
դունելով, ինչ որ պապական եւ բո-
ղոքական եկեղեցիներու մէջ չատնոց
մօտք գտած է:

— Պատրիարքական անունով մէկը
70,000 ռուբլի կտակեր է բարեգոր-
ծական նպատակներու:

— Երուսաղէմի ներքին նոր կանոն-
աւորիչ Պոլսոյ Խառն Ժողովը քննու-
թեան առնելով, մէկ քանի բարկիտ-
խուսիներով ընդունեց եւ վաւերացուց
հինգ տարուան պայմանաժամով:

— Կաթողիկոսական Տեղապահ Սու-
րէնեան արքեպ. Սինօղէն ծառայու-
թեանց ցուցակները ուզեր է կարգ
մը եպիսկոպոսներու եւ վարդապետնե-
րու, որոնց համար ուսուցական վարու-
թեան չքանչանքներ պիտի խնդրէ ե-
ղեր:

— Հապէշխատանի մէջ Գուլուստեան
անունով հարուստ հայ մը մեռած եւ
400,000 ոսկի ծառանդութիւն թողած
է: Եպիսկոպոսէն Գուլուստեան մը հե-
ռագրած է Պատրիարքին թէ ինքն է
հանգուցեալին ժառանգորդը եւ պաշ-
տօնական թուղթեր ունի ի ձեռին:

— Հայ-Հռոմէական Տէր Յարութիւն
վրդ. Շիրինեան մեր Պատրիարքարանը
գրծու՞մ ընելով Հայ եկեղեցւոյ գերիւր
դարձած եւ ընդունուած է:

— Դավրէթի մէջ կեդրոնական վար-
ժարան մը բանալու նպատակաւ մէկ
քանի վաճառականներ 20,000 ռուբլի
հաւաքած են: Նաեւ Տէր Եղիշէ վրդ.
Մուրադեան 10,000 ռուբլի հաւաքե-
ր է: Այս գումարներով մօտ օրէն պիտի
հաստատուի վարժարանը: Դործին կա-
րեւորութիւնը գնահատելով՝ մասնա-
ւոր նուէրներ խոստացողներ ալ կան
եղեր:

ՍՈՎԱՑԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Դ. ՅՈՒՅԱԿ

Նախորդ ցուցակի գումար 435.90
Յովհաննէս Գօլոյեան 2.40 Հմայ-
եակ Խուլպուրեան 1. Դեորդ Պօյաճեան
1. Կարապետ Քէշիշեան 1. Դալուստ
Սահակեան 1. Թօմաս Դաւիթեան 1.
Միրիճեան Աճէմեան 1. Պետրոս Մա-
նուկեան 1. Պետրոս Սօրիսեան 1.
Վառա Բարպեան 1. Մանուկ Աւետիս-
եան 1. Սիրակ Սիմոնեան 1. Խաչիկ
Ներսէսեան 1. Տրքարան Պապոսեան 1.
Դրեգոր յարութիւնեան 1. Յովհաննէս
Սարգիսեան 1. Ոմի 1. Ոմի 1. Նիկո-
ղոս Չիլեան 1. Յարութիւն Յարու-
թիւնեան 1. Թէօփիլ Ստեփանեան 1.
Տրգատ Մաղուսեան 1. Յովհաննէս
Թորոսեան 1. Սարգիս Չամիչեան 1.
Յակոբ Յովհաննէսեան 1. Ամրիկ Յա-
կոբեան 1. Մկրտիչ Յակոբեան 1.
Պաղտատար Դասպարեան 1. Մարտիրոս
Մարտիկեան 1. Ստեփան Դեորգեան
1. Դասպար Շահինեան 1. Մուրադ
Մարտիրոսեան 1. Խաչիկ Մարգար-
եան 1. Մեղճեան Մարգարեան 1. Մը-
կրտիչ Տրիֆեան 1. Աւագ Աւետիսեան
1. Խաչիկ Մանուկեան 1. Թօմաս
Մարտիրոսեան 1. Խաչիկ Յարութիւն-
եան 1. Յովհաննէս Բարաքեան 1. Լե-
ւոն Կիւրօնեան 1. Դեորդ Չաքարեան
1. Պաղտատար Եղիազարեան 1. Մուր-
տիրոս Յովհաննէսեան 1. Ալիքսան
կիրակոսեան 1. Կարապետ Պաղտա-
տարեան 1. Մեղճեան Դասպարեան 1. Ե-
ղիս Արքաշապեան 1. Մանուկ Յովհան-
նէսեան 1. Մարտիրոս Ասատուրեան 1.
Մկրտիչ Յովհաննէսեան 1. Մարտիրոս

1. Մարգար Դեորգեան 1. Դեորդ Անդ-
րէասեան 1. Սերոբ Սոաքեան 1.
Յակոբ Մուրադեան 1. Մանուկ Աւե-
տիսեան 1. Տօնիկ 1. Սարգիս Դու-
կասեան 1. Մանուկ Յարութիւնեան
1. Սեդրակ Մուրադեան 1. Մարտիրոս
Աւետիսեան 1. Դեորդ Ալըգեան 1. Սէ-
ֆէր Սահակեան 1. Միքայիլ Սինան-
եան 1. Մուրադ Սմիլխանեան 1.
Դեորդ Կարապետեան 1. Յարութիւն
Մարգարեան 1. Յարութիւն Աւագեան
1. Մանուկ Յովհաննէսեան 1. Մկրտիչ
Պօղոսեան 1. Յովնան Յովնանեան 1.
Յակոբ Աւետիսեան 1. Դրեգոր Խա-
չատուրեան 1. Վարդան Յովհաննէս-
եան 1. Փանոս Յովհաննէսեան 1. Յով
հաննէս Մարգարեան 1. Դաւէթ Նա-
ղարեան 1. Սահակ Յովհաննէսեան 1.
Յովհաննէս Սարգիսեան 1. Խոսրով
Սահակեան 1. Փանոս Բրուտեան 1.
Արքաշապ Դեորգեան 1. Եղիա Դրի-
գորեան 1. Աւետիս Մարգարեան 1.
Յարութիւն Պօղոսեան 1. Սարգիս Սար-
եան 1. Արշակ Վարդանեան 1. Յով-
նան Սարգիսեան 1. Ասատուր Յակոբ-
եան 1. Դրեգոր Պետրոսեան 1. Մար-
տիրոս Յակոբեան 1. Աւետիս Յարու-
թիւնեան 1. Սարգիս Մէլիքեան 1.
Լեւոն Մէլիքեան 1. Ոմի 1. Մանուկ
Պօղոսեան 1. Դաւարոս Աղաբեան 1.
Սարգիս Մարտիկեան 1. Մարտիրոս
Յակոբեան 1. Վարդան Խաչիկեան 1.
Ասատուր Համբիկեան 1. Համբարձում
Մարտիրոսեան 1. Մարտիկ Յովսէփ-
եան 1 Քրսեմ:


Գումար 541.30 Քր.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տ. Տիգրան Ուղունեան մէկ
տարուան Իրաւունք կը նուիրէ
Ֆիշպուրկի (Ամերիկա) Հայկական
Դպրարանին:

Տ. Ա. Աղամեան (Ամերիկայէն
մէկ տարուան Իրաւունք նուիրած
է Սալէմի Ս. Ա. Հայկական Դրա-
րարանին:

ՄԵՐ ԴՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ



Ամերիկա եւ Եգիպտոս

Ամերիկայի մէջ «Իրաւունք»ի ընդ-
հանուր գործակալութիւնը ստանձնած
է Տիգր. Մ. Սուրբիկեան:

Ամէն իրաւասութիւն եւ զիւրու-
թիւն տրուած է իրեն թերթիս բաժա-
նորդներ գրելու եւ բաժնեկիցները
գանձելու:

Տ. Մ. Սուրբիկեանի քով կը գտնուին
նա «Իրաւունք»ի բոլոր հրատարակած
գիրքերը, նոր երգարան, Նէտա, Հայ-
րենիք, Զոհեր, Թիպարաբ, Կարիպ
Ախպէր եւն:

Հասցէն է՝

Տ. Մ. ՍՈՒԴԻԿԵԱՆ

42 Բլաւսան ոք.—Պօսթօն Մէս.




Եգիպտոսի մէջ «Իրաւունք»ի գոր-
ծակալութիւնը ստանձնեց Տ. Արայ
Դալէմեան, որ ունի ամէն իրաւա-
սութիւն բաժնեկիցներու եւ բաժ-
նեկին գանձելու:

Հասցէն է՝

Արայ Դալէմեան

Հան Հալիլ Վիլայի Մախսիս
Դահիթ



Издатель: Д-ръ М. Торосиянъ